# ԱՄԱՆՈՐԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա-Ի ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐԸ

## ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՐԳՈ ՊԱՐՈՆ ԱՆՏՈՆ ՔՈՉԻՆՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Մեծարգո Պարոն Նախագահ.

Նոր տարվա առթիվ հաճեցեք ընդունել Մեր ջերմագին շնորհավորանքները և լավագույն բարեմաղթությունները Ձեր քաջառողջության, արևշատության և հայրենանվեր գործոց հաջողության համար: Ի սրտե մաղթում ենք, որ մեր Մայր Հայրենիքը 1957-ի տարվա ընթացքում նորանոր նվաճումներով առաջադիմի ու ծաղկի խաղաղ և ապահով, սովետական ժողովուրդների եղբայրական ընտանիքում:

Ողջունիվ՝

ՎԱԶԳԵՆ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

---

## ՍՍՌՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ, ՄԵԾԱՐԳՈ ՊԱՐՈՆ ԳՈՍՏԵՎԻՆ

ՄՈՍԿՎԱ

Նոր տարվա առթիվ հաճեցեք ընդունել Մեր անկեղծ շնորհավորանքները և լավագույն բարեմաղթությունները Ձեր քաջառողջության և գործոց հաջողության համար: Թող ծաղկի և ամրանա սովետական ժողովուրդների եղբայրական միությունը՝ հօգուտ սովետական մարդկանց երջանկության և խաղաղության:

ՎԱԶԳԵՆ Ա.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

---

## ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ

ԵՐԵՎԱՆ

Նոր տարվա առթիվ հղում ենք Մեր անկեղծ շնորհավորանքները և լավագույն բարեմաղթությունները պատվարժան խորհրդին: Հայցում ենք Աստուծուց հաջառողջություն, արևշատություն և գործոց հաջողություն՝ խորհրդի բոլոր անդամներին: Աղոթում ենք, որ Աստված զորավիգ լինի մեր ժողովրդին՝ ձեռք բերելու նորանոր հաջողություններ իր վերածնված Հայրենիքի բարգավաճման գործում:

ՎԱԶԳԵՆ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

---

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

Շնորհակալություն Ձեր շնորհավորանքի և բարեմաղթությունների համար: Հանեցեք, խնդրեմ, ընդունել նաև իմ անկեղծ շնորհավորանքը նոր տարվա առթիվ, ինչպես և իմ բարեմաղթությունները Ձեր հաջառողջության և ժողովուրդների միջև բարեկամության ու խաղաղության ամրացման գործի հետագա հաջողությունների համար:

ՍՍՌՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ
ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ
ԳՈՍՏԵՎ

ՄՈՍԿՎԱ

---

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Հայ եկեղեցու գործերի խորհուրդը խորին շնորհակալություն է հայտնում նոր տարվա առթիվ Ձեր ուղարկած շնորհավորանքի համար: Փոխադարձաբար շնորհավորելով Ձեր և ամբողջ միաբանության նոր տարին, ցանկանում ենք Ձեզ առողջություն, երկար կյանք և նորանոր հաջողություններ:

Ի ՏԵՂԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԻՆՋԻԿՅԱՆ

ԵՐԵՎԱՆ

---

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

Նոր՝ 1957 տարվա առթիվ հանեցեք ընդունել մեր շնորհավորանքները: Ցանկանում ենք Ձեզ հաջառողջություն և բեղմնավոր ծառայություն եկեղեցուն ու հասարակությանը:

ԲՈՒԼՂԱՐԱԿԱՆ ԺՌ-Ի ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ
ՔՅՈՒՋՈՒԿՈՎ

ՍՈՖԻԱ